Դոկտ. Ռուբինա Փիրումեան.- «Երիտասարդ սերունդին անհրաժեշտ է կրթել եւ զինել պահանջատիրութեամբ»...

Չորեքշաբթի, 03 Դեկտեմբերի 2014 08:10

Հարցազրոյց՝ ցեղասպանագէտ, *UCLA* համալսարանի նախկին դասախօս, դոկտ. Ռուբինա Փիրումեանի հետ

Հ.- Տկն. Փիրումեան մեզ համար մեծ պատիւ է այն իրողութիւնը, որ Ձեր հայրը՝ Բաղդիկ Մինասեանը շուրջ *11* տարի *(1960-1971* թթ.*)* զբաղեցրել է «Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագրի պաշտօնը, եւ եթէ կարելի է այսօր Դուք որպէս դուստր եւ որպէս պատմաբան խօսէք Բաղդիկ Մինասեանի «Ալիք»-ի գործունէութիւնից:

Պ.- Ինձ համար իմ հայրիկի «Ալիք»-ում զբաղուած լինելը, «Ալիք»-ի հետ այդքան մօտկից հարազատօրէն

Իմ կեանքիս ճանապարհը, երբ արդէն ճարտարագիտութիւնը ամբողջովին թողեցի եւ մտայ հայոց գրականութեան եւ ընդհանրապէս համայնքի կամաւոր աշխատանքների մէջ՝ երկու գծով ընթացաւ: Ակադեմիական աշխատանքս ամբողջովին Հայոց Ցեղասպանութեանը եւ հայոց գրականութեանն էր վերաբերում:

առնչութիւն ունենալը երեւի կեանքի դաս էր ինձ համար: Ճիշտ է, որ նախքան հայրիկիս այս պաշտօնում տեսնելը ես ազգային գործունէութեամբ արդէն իսկ զբաղւում էի եւ, բաւականաչափ, մասնակից էի համայնքային կեանքին, բայց կարծես հօրս վերադառնալով եւ նոյնիսկ այդքան վատ առողջական վիճակում Դաշնակցութեան օրգան ղեկավարելու այդ բարձր դիրքին հասնելու իր զոհաբերութիւնը ինձ համար կեանքի դաս եղաւ:

Ես յիշում եմ, ինչպէս ասացիր այդ 11 տարին մեր տան մէջ «Ալիք»-ի ամբողջ մտահոգութիւններն էին, ամբողջ քաղաքականութիւնը, Դաշնակցութեան ճշտած քաղաքականութիւնը, յատկապէս Խորհրդային Միութեան նկատմամբ: Հետաքրքիր ձեւով իմ մէջ այն ժամանակ այն տպաւորութիւնն էր, որ Դաշնակցութիւնը փորձում է նորից հայ ժողովրդի շահերին ի նպաստ բանակցութիւններ վարել Խորհրդային Միութեան հետ, կամ Հայաստանի իշխանութիւնների հետ, իսկ հայրս այնտեղից վերադարձած, այդ Խորհրդային վարչակարգի թթուն խմած չէր կարողանում հանդուրժել, որ ինչու պէտք է նման մի ղեկավարութեան հետ, որը հայ ժողովրդի արիւնն է ծծել մենք դեռեւս նրա նկատմամբ հանդուրժողականութիւն ցուցաբերենք: Բաւականաչափ սաստում էին կարծես իրեն, որ նման քաղաքականութիւն վարի եւ այդքան էլ չգրի Խորհրդային Միութեան դէմ: Դա ինձ համար էլ անընդունելի էր, կարծես իմ մէջ տարիների ընթացքում փոխանցւել էր այդ ատելութիւնը, աւելի ճիշտ այդ դրսեւորումը:

Յիշում եմ նաեւ հայրիկիս ընդհանուր համաշխարհային քաղաքականութեան մէջ այդ աստիճանի իրազեկութիւնը, որը տպաւորել էր ինձ: Իր ֆրանսերէն իմացութեամբ, որին շատ լաւ էր տիրապետում եւ հետաքրքիր ձեւով, երբ վերադարձաւ Սիբիրից ռուսերէն էլ գիտէր, շատ վարժ եւ երբ որ նրանից հարցնում էի ռուսերէնիդ իմացութիւնը որտեղից, պատասխանում էր, որ իր համար շատ դիւրին է եղել ռուսերէն սովորել, քանի որ չեխերէնով էր աւարտել իր դոկտորան եւ այն ստացել էլ Պրագայի համալսարանից: Եւ չեխերէնից ռուսերէն անցումը իր համար բաւական դիւրին էր ստացւել: Ու այդ ժամանակ համաշխարհային քաղաքականութեան վերաբերեալ «Լը մոնդ», «Լէ Ֆիգարո» կարդալով, եւ դրանցից անվերջ թարգմանութիւններ կատարելով «Ալիք-ը այդ ընթացքում բաւական իրազեկ էր դառնում համաշխարհային քաղաքականութիւնից:

Յիշում եմ, որ ինքը քայլելով ֆրանսերէն էր ընթերցում ու թարգմանում, ես կամ մայրս գրի էինք առնում, որովհետեւ սոսկալի վատ ձեռագիր ունէր եւ «Ալիք»-ում բացի մի երկու գրաշարից, ոչ ոք չէր կարողանում կարդալ նրա ձեռագիրը: Մենք գրում էինք, ինքը աչքի էր անցկացնում եւ ուղարկում:

Այնպէս որ, մենք ընտանիքով ապրել ենք «Ալիք»-ի խմբագրութեան ընդհանուր հոգսերով եւ այդ օրերի անցուդարձով: Ինձ մօտ այդ յուշերը ու մտորումներն են տպաւորւել եւ մնացել:

Հ.- Անցնենք Ձեր գործունէութեանը: Դուք գիտական ակտիւ գործունէութիւն էք ծաւալում եւ վերջերս ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարի կողմից արժանացաք յուշամեդալի:

Եթէ կարելի է պատմէք այս բոլորի մասին, քանի որ գիտենք նաեւ յուշամեդալի արժանանալու առիթը կապւած է հիմնականում Հայոց Ցեղասպանութեան մասին աշխատութեանը:

Պ.- Ոսկէ յուշամեդալը Հայոց Ցեղասպանութեանը նւիրւած աշխատանքիս համար էր, ոչ թէ իմ ակադեմիական աշխատանքի:

Իմ կեանքիս ճանապարհը, երբ արդէն ճարտարագիտութիւնը ամբողջովին թողեցի եւ մտայ հայոց գրականութեան եւ ընդհանրապէս համայնքի կամաւոր աշխատանքների մէջ՝ երկու գծով ընթացաւ: Ակադեմիական աշխատանքս ամբողջովին Հայոց Ցեղասպանութեանը եւ հայոց գրականութեանն էր վերաբերում: Սա իմ աշխատանքի ակադեմիական մասն է, որ պէտք է փորձեմ հայ ժողովրդի գլխին եկած այս աղէտը՝ Ցեղասպանութիւնը՝ վերծանել գրականութեան մէջ, գրականութեան մէջ տեսնել այն ազդեցութիւնը, որ Հայոց Ցեղասպանութիւնն է թողել մեր ժողովրդի վրայ թէ՛ քաղաքական իմաստով, թէ՛ ընկերային, եւ թէ՛ յատկապէս հոգեբանական իմաստով: Եւ այդպիսով աշխարհին ցոյց տալ ինչ է տեղի ունեցել, ի՞նչ է անարդարութիւնը եւ պահանջատիրութիւն հատուցման համար:

Երկրորդ աշխատանքը նոյն ուժգնութեամբ, նոյն զուգահեռութեամբ կրթական ասպարէզում եմ տանում: Այսինքն, ես հաւատում եմ, որ նախեւառաջ մեր երիտասարդ սերունդին անհրաժեշտ է կրթել, պէտք է զինել այդ պահանջատիրութեամբ: Ես իմ դաստիարակութեան բերումով զգում եմ, այդ պահանջատիրութեան կարեւորութիւնը, այդպէս եմ դաստիարակւել, եւ ինձ այսպէս դաստիարակել է այն սերունդը, որը տեսել է Հայոց Անկախութիւնը, նոյնիսկ այն սերունդը, որը վերապրել է Հայոց Ցեղասպանութիւնը եւ պատանի տարիքում ես այդպիսիների շունչի տակ եմ դաստիարակւել: Այսօր նրանք չկան, մեր սերունդն է, որ փոխանցում եւ դաստիարակում է ու դեռ մեզանից աւելի երիտասարդ սերունդ: Ուրեմն՝ սերունդները փոխարինում են իրարու եւ թող այդ յիշողութիւնը չթուլանայ, այն յիշողութիւնը, որը մենք պէտք է փոխանցենք որպէս դաստիարակութիւն գալիք սերունդին: Եւ դա արդէն պէտք է լինի գրքային տարբերակով, որովհետեւ հոգի չի փոխանցւում: Այն ժամանակ, երբ ես դաստիարակւում էի, այդ ոգին, որը ինձ փոխանցւել է եւ այն ժամանակ դասագրքի կարիք չունէինք, իմ գրքերս եթէ բացելու լինենք, նրանցից ոչ մէկում չէր խօսւում Հայոց Ցեղասպանութեան մասին:

Իսկ այսօր արդէն Հայ Դատի դասագրքի կարիք է զգացւում, ես շատ տարիներ առաջ ելնելով այս մտահոգութիւնից կամաւոր կերպով Հայ Դատ էի դասաւանդում ազդեցիկ դպրոցներից մէկում: Զգացի, որ նախ նիւթ չունենք եւ յետոյ երեխաներից ոչ մէկը պատրաստ չէ դա ընդունելու, աւելի ճիշտ ենթահող պատրաստւած չի: Այդ օրւանից յետոյ ձեռնարկեցի Հայ Դատի դասագրքեր պատրաստել 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանում ուսանող հայ աշակերտների համար:

1997 թւականից դրանք սկսւեց հրատարարկւել եւ այդ երեք դասագրքերի միջոցով փորձել եմ փոխանցել մեր Դատի սկզբնաւորման պատմութիւնը մինչեւ Արցախեան շարժում եւ դրա մէջ նաեւ Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնը: Եւ անպայմանօրէն անհրաժեշտութիւն է, որ Հայ Դատը գրագէտ

ձեւով մատուցի հայ աշակերտին:

Մշտապէս ցաւ եմ զգացել թէ ինչու Հայաստանում չի դասաւանդւում, չեն պարապում աշակերտի, երիտասարդի հետ Հայ Դատի ազգային իմացութիւնը, չի խորացւում նրանց մէջ Հայ Դատի նկատմամբ զգօնութիւնը, որպէս զէնք:

1997 թւականին էր, որ ժամանակի ՀՀ կրթութեան նախարարը Լեւոն Մկրտչեանն էր, ինձ կանչեց եւ ասաց որ քո փորձից ելնելով, քանի որ Հայ Դատի դասագրքեր ես գրել արդէն դասագիրք գրիր հիմա Հայկական Հարցի եւ Ցեղասպանութեան պատմութեան մասին, որպէսզի մենք այստեղ բարձր դասարաններում դասաւանդենք: Ես յիշում եմ, որ Խուրշուդեանը նաեւ կար, նա այդ ժամանակ ամբողջովին իր կուսակցութեան զծից վերադարձած, այսինքն կոմունիստ պատմաբանի ուղղութիւնը փոխած նոր զիծ էր ընտրել եւ ազգային գաղափարախօսութիւն էր ցանկանում վերծանել, թէ ի՞նչ է ազգային գաղափարախօսութիւնը: Ինձ համար տարօրինակ էր այդ օրերին առաջինը՝ մտածում էի, որ եթէ ինձ ասեն ի՞նչ է ազգային գաղափարախօսութիւնը իմ բացատրութիւնս չգիտեմ որքանով յստակ կը լինի, որովհետեւ մեծացել եմ այդ գաղափարախօսութեամբ: Բացի այդ, եթէ ես այսօր Հայկական Հարցի պատմութիւն եմ գրում կամ Հայ Դատի պատմութիւն եմ գրում ազգային գաղափարախօսութիւնը ինձ համար մեկնակէտ է եւ ոչ թէ բացատրելի մի բան: Հիմա նոր անկախացած Հայաստանում փորձում են գտնել թէ ինչ է ազգային գաղափարախօսութիւնը, դա է տարօրինակ ինձ համար: Ամէն դէպքում գրւեց այդ գիրքը, բայց, դժբախտաբար, այդ ընթացքում մի քանի նախարարներ փոխուեցին: Առաջ հումանիտար հոսքի համար տրւեց եւ յետոյ ասացին, որ եթէ 40 հազար օրինակով տպագրւի այն, 40 հազար օրինակը հնարաւոր է տրամադրել բոլոր դպրոցներին: 40 հազար օրինակը տպւեց, բայց կրկին դպրոցներին բաշխումը չիրականացաւ: Այսինքն, Կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը որեւէ օրէնսդրութիւն չմշակեց, որպէսզի կրթական ոլորտում Հայ Դատի ուսուցումը լինի պարտադիր ուսուցում: Եւ քանի որ պարտադիր չէր թողնւեց ուսուցչի հայեցողութեանը, նրանցից էր կախւած կը պարապւի թէ ոչ: Երբ նոր էր գիրքը լոյս տեսել շուրջ 15-16 աշխատանիստեր կազմակերպեցինք, որպէսզի ես բացատրեմ, որ այս նոր մեթոդով, որը իրենց բոլորովին անծանօթ էր ինչպէս պէտք է Հայկական Հարցի պատմութիւնը դասաւանդեն: Շատ խոչընդոտների առջեւ կանգնեցի, որովհետեւ զգացի, թէ ուսուցման մեթոդիկան որքան տարբեր է: Վերջերս արդէն երբ հանդիպում եմ ուսուցիչների, քաղաքական գործիչների, նրանք ասում են, որ մենք քո գրքով ենք դաստիարակւել, այսինքն՝ այդ գիրքը շատ ենք օգտագործել:

Մի քանի տարի առաջ ես կրկին ներկայացայ նախարարութիւն, այս անգամ նախարարը արդէն Աշոտ Աշոտեանն էր եւ նրան խնդրեցի, որ մենք ծրագիր ունենք, որով հնարաւոր է առաջին դասարանից մինչեւ 12-րդ դասարանի երեխաներին դասաւանդւի Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնը, որը կարելի է ամենափոքր երեխային էլ դասաւանդել, եթէ նիւթը յարմար լինի, մեթոդոլոգիան ճիշտ լինի հնարաւոր է առանց որեւէ հոգեբանական հարւածի ենթարկելու դասաւանդել: Եթէ երեխային սխալ մատուցմամբ պէտք է հոգեբանական հարւածի ենթարկենք որեւէ ձեւով համաձայն չեմ դրան: Սա իմ ծրագիրն էր, որը կազմւել էր եւ դարձաւ էլեկտրոնային ձեռնարկ: Եւ այդ էլեկտրոնային ձեռնարկի

մեկնարկման առիթով էր, որ Կրթութեան եւ գիտութեան նախարարը այդ յուշամեդալը շնորհեց ինձ: Շնորհակալ եւ երախտապարտ եմ այդ մեդալի համար, բայց դեռեւս զոհունակութիւն չեմ զգում, այն ժամանակ զոհունակութիւն կը զգայի, երբ իրապէս գրքեր տրուէր դպրոցներին եւ դասաւանդուէր այն մեթոդով եւ ծրագրով, որը ես էի ցանկանում:

Հիմա կրկին վերաշխուժացել է այս ծրագիրը եւ յոյս ունեմ, որ իրապէս առնուազն 100-րդ տարելիցի առիթով սա օրէնքի ուժ կը ստանայ եւ մուտք կը գործի դպրոցներ:

Հարցազրոյցը վարեց

ԱՐՄԻՆԷ ԷԼԻԱԶԵԱՆԸ